Արձանագրություն № 3

գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

| | |
|---|---|
| **1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման, նիստի անցկացման մասին** | |
| Պատվիրատու | *«ՀԱԷԿ» ՓԲԸ* |
| Գտնվելու վայրը | *ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր* |
| Ընթացակարգի ծածկագիրը | *ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-1* |
| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | **ԷԼԵԿՏՐԱԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ** |
| Նիստի անցկացման վայրը | *ք.Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք, 410 սենյակ* |
| Նիստի անցկացման օրը և ժամը | 17.06.2016թ. *ժամը* 12:00 |
| Նիստի անցկացման նպատակը | Ընթացակարգը ամբողջությամբ չեղյալ համարելու և նոր ընթացակարգ հրապարակելու մասին |
| **2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին** | |
| Հանձնաժողովի նախագահ | Մ. Գաբոյան ՇՇՇՇԲ պետ |
| Հանձնաժողովի անդամներ | Ա. Մելքոնյան ԸԲ պետ |
| | Լ. Բաբայան ՌԲ պետ |
| | Վ. Մկրտչյան ՋՍՀԱ պետ |
| | Ա. Խաչատրյան ՔԱ պետ |
| Քարտուղար | Ա. Ղազարյան ԳԿԲ գլխավոր մասնագետ |

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պատվիրատուի ղեկավարի՝ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ գլխավոր տնօրեն պարոն Վարդանյանի հանձնարարությունը արտահերթ նիստ հրավիրելու մասին:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի ընթացակարգի վերաբերյալ թեժ գծին <<Վի էյչ կա>> ՍՊԸ-ի և <<Արայ>> ՍՊԸ-ի ահազանգերի մասին գրությունները, պատասխանատու ստորաբաժանման ծառայողական գրությունը և ընթացակարգի համակարգող քարտուղարի 15.06.2016թ. տեղեկանքը:

Հաշվի առնելով այն, որ գնման ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է մինչև <<ՀԱԷԿ>> ՓԲԸ գնումների պլանը հրապարակվելը, ինչպես նաև հրավերի տեքստում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, հրավերում հրապարակվել է՝

<<Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք 410 սենյակ հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող << 7 >> -րդ աշխատանքային օրվա ժամը <<11:00>>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն>>:

Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<11:00>>-ին, <<ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք>> հասցեում:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ <<13.06.2016թ.>> ժամը <<11:00>>-ը:

Մինչդեռ պետք է լիներ <<15.06.2016թ.>> ժամը <<11:00>>-ը, որն էլ եղել թյուրիմացության պատճառը և հայտերը 15.06.2016թ. ժամը <<11:00>>-ի փոխարեն բացվել են 13.06.2016թ. ժամը <<11:00>>-ին:

Ս/թ հունիսի 15-ին ժամը 10:00-ի սահմաններում <<Արայ>> ՍՊԸ-ի կողմից վերը նշված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացվել, որից էլ պարզվել է վերը նշվածը:

Առաջարկվեց ընթացակարգը ամբողջությամբ համարել չեղյալ և հրապարակել նոր ընթացակարգ:

**Ընդունվեց որոշում՝ Կողմ - 5, դեմ - 0 :**

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Մ. Գաբոյան

Անդամներ՝ ____________ Ա. Մելքոնյան

____________ Լ. Բաբայան

____________ Վ. Մկրտչյան

____________ Ա. Խաչատրյան

**Համակարգող քարտուղար՝** ____________ Ա. Ղազարյան